Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Խաչփար գյուղի «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի մեթոդիստի (տնօրենի ուսումնական գծով տեղակալի) (0,5 դրույքաչափ), հոգեբանի (1,0 դրույքաչափ) դաստիարակի (0,75 դրույքաչափ) թափուր պաշտոնների համար:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում:

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի դեկտեմբերի 25-ին ժամը 11:00-ին:

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք, գ. Խաչփար 5-րդ փ., 17 շ.

Հեռ.՝ +37444961116 Նադեժդա Կուրղինյան (տնօրեն)

Էլ.փոստի հասցե՝ xachpar.mankapartez@mail.ru